# ԴԱՏԱՐԱՆ՝
# ԱՌԱՆՑ ՓԱՍՏԱԲԱՆԻ

ԵՐԵՎԱՆ-2011

# ԴԱՏԱՐԱՆ` ԱՌԱՆՑ ՓԱՍՏԱԲԱՆԻ

Այս հրատարակումը պատրաստվել է “Դատական համակարգից դեպի անկախ դատական իշխանություն” ծրագրի շրջանակներում: Ծրագիրը իրականացվում է Եվրոպական Միության աջակցությամբ: Հրատարակման բովանդակության համար պատասխանատուն Ֆեմիդա հասարակական կազմակերպությունն է' այն չի արտահայտում Եվրոպական Միության տեսակետները:

This publication has been produced within the frames of the project “From the Legal Sistem to the Independent Judicial Authority” with the assistance of the European Union. The contents of this publication are the sole responsibility of “Femida” NGO and can in no way reflect the views of the European Union.

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՖԵՄԻԴԱ
հասարակական կազմակերպություն

Ծրագրի ղեկավար`Ջուլիետա Ամիրխանյան

Կազմող հեղինակներ`
Վազա Ամիրխանյան,
Հովիկ Շահնազարյան

Տպաքանակը` 3.000
Արշակունյաց 2, Մամուլի տուն, 10 հարկ
Հեռ. /+ 374 77/ 585422

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐԸ** . . . . . . . . . . . . . . . . . . . . .6
**ՈՐՈՇԵՔ ԻՆՔՆԵՐԴ** . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .7
**ՎԵՃԵՐԻ ՆԱԽԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ** . . . . . . . . . . .8
**ԱՌԱՆՑ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ** . . . . . . . . . . . . . . .9
**I. ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ ԴԱՏԱՐԱՆ** . . . . . . . . . . . . . . . .12
1. Արդյո՞f դատարան դիմելու (հայց հarուցելու) համar կան nrոշակի ժամանակային սահմանափակումներ (հայցային վաղեմություն) . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .12
2. Դատարանն իrավունf ունի՞ վերականգնել հայցային վաղեմության ժամկետները, թե՝ ոչ . . . . . . . . . . . . . . .13
3. Ինչպե՞ս են հաշվarկվում հայցային վաղեմության ժամկետները . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .13
4. Հնarավո՞r է հայցային վաղեմության ժամկետների ընդհատում, կասեցում, թե՝ ոչ . . . . . . . . . . . . . . . . . . .14
5. Ինչպե՞ս է կarգավոrվում հայցային վաղեմության ժամկետների ընթացfը դատարանի կողմից հայցն առանց fննության թողնելու դեպfում . . . . . . . . . . . . . . .15
6. Լինու՞մ են դեպfեr, nrոնց վrա հայցային վաղեմության ժամկետներ չեն տարածվում . . . . . . . . . . . . . . . . .15
7. Ինչպե՞ս կազմել fաղաfացիական գործով հայցադիմումը և կա՞ն արդյոf orենսդրությամբ սահմանված պարտադիր պայմաններ հայցադիմումի համար, թե՝ այն կարելի է շարադրել ազատ ոճով . . . . . . . . . . . . . . .16
**ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԴԱՏԱՐԱՆ** . . . . . . . . .20
8. Ո՞r դեպfեrում և ով կարող է ազատվել պետական տուrfի վճարումից . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .20
9. Ինչպե՞ս են կողմերի միջև բաշխվում դատական ծախսերը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .22
10. Իrավունf ունի՞ հայցվորը մեկ հայցադիմումի մեջ շարադրել մի fանի պահանջ և արդյո՞f դrանf պետf է fննվեն միաժամանակ, թե առանձին . . . . . . . . . . . . . .23
11. Դատավորը միանձնյա՞ է լուծում հայցադիմումն ընդունելու հarցը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .23

12. Իրավունք ունի՞ դատավորը մերժելու հայցվորի ներկայացրած հայցադիմումի ընդունումը և որ դեպքերում . . 23
13. Ի՞նչ է տեղի ունենում հայցադիմումը ներկայացնելուց հետո . . . . . . . . . . 24
14. Ո՞ր դեպքերում հայցադիմումը կարող է վերադարձվել հայցվորին . . . . . . . . . . 24
15. Մինչև դատաքննությունն սկսելը պատասխանողը կարո՞ղ է ծանոթանալ հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին . . . . . . . . . . 25
16. Ի՞նչ է կատարվում, երբ հայտնի չէ պատասխանողի գտնվելու վայրը՝ հայցադիմումը և դրան կից փաստաթղթերի պատճեններ ուղարկելու համար . . . . . . . . . . 26
17. Ստանալով հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի պատճենները՝ պատասխանողը կարո՞ղ է դրանց վերաբերյալ ներկայացնել առարկություններ . . . . . . . . . . 26
18. Իրավունք ունի՞ քաղաքացին հակադարձ (հակընդդեմ) պահանջ ներկայացնել դատավարության ժամանակ և որ դեպքերում . . . . . . . . . . 27
19. Ինչպե՞ս վարվել, որպեսզի մինչև գործի քննությունն ավարտելը պահպանվի վիճելի գույքը կամ պատասխանողի ունեցվածքը . . . . . . . . . . 27
20. Հայցի ապահովման ինչպիսի՞ միջոցներ կարող են կիրառվել . . . . . . . . . . 27
21. Ո՞ր դեպքերում է դատարանը հայցը կամ դիմումը թողնում առանց քննության . . . . . . . . . . 28
22. Քաղաքացու համար ինչպիսի՞ հետևանքներ կարող է ունենալ հայցը կամ դիմումն առանց քննության թողնելը . . . . . . . . . . 29
23. Քաղաքացիական գործերի քննության ժամանակ ովքե՞ր կարող են լինել ներկայացուցիչներ . . . . . . . . . . 29
24. Կարո՞ղ է կողմը դիմել դատարանին արագացված դատաքննություն կիրառելու համար . . . . . . . . . . 30
25. Իրավունք ունե՞ն կողմերը հաշտության համաձայնություն կնքել վճռի կատարման ընթացքում . . . . . . . . . . 31
**II. ՈՒ՞Ր ԴԻՄԵԼ, ԵԹԵ ԲԱՎԱՐԱՐՎԱԾ ՉԵՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՅԱՑՐԱԾ ՎՃՌԻՑ** . . . . . . . . . . 32

26. Ո՞վ կարող է դիմել քաղաքացիական գործերով Վերաքննիչ դատարան և ինչ ժամկետներում . . . . . . . . . . . 32
27. Ի՞նչ պետք է նշվի վերաքննիչ բողոքի մեջ . . . . . . . . . 32
28. Դուք գոհ եք վճռից, բայց մյուս կողմը վերաքննիչ բողոք է բերել՝ ի՞նչ պետք է անել . . . . . . . . . . . . . . . . . 33
29. Կարո՞ղ է արդյոք վերաքննիչ բողոքը վերադարձվել, և ինչ հետևանքներ դա կունենա . . . . . . . . . . . . . . . . . 34
30. Ի՞նչ ժամկետներում և ինչ կարգով է գործը քննվում Վերաքննիչ դատարանում . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 35
**III. Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԲԱՎԱՐԱՐՎԱԾ ՉԵՔ ՆԱԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻՑ . . . . . . . . . . .** 37
31. Ովքե՞ր և որ դեպքերում կարող են քաղաքացիական գործերով դիմել Վճռաբեկ դատարան . . . . . . . . . . . . . 37
32. Քաղաքացիական գործերով վճռաբեկ բողոք բերելու համար ժամկետային սահմանափակումներ գոյություն ունե՞ն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 37
33. Ո՞ր դեպքերում են խախտված կամ սխալ կիրառված համարվում նյութական և դատավարական իրավունքի նորմերը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 38
34. Ո՞ր հանգամանքներն են քաղաքացիական գործերով համարվում նոր երևան եկած . . . . . . . . . . . . . . . . . 39
35. Ինչպե՞ս բերել վճռաբեկ բողոք . . . . . . . . . . . . . . 40



# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐԸ

Ի տարբերություն քրեական իրավունքի, որի հետ առնչվում են, բարեբախտաբար, ոչ բոլոր քաղաքացիները, քաղաքացիական իրավունքի հետ առնչվում ենք գրեթե բոլորս: Դա այն բազմազան հարաբերություններն են, որոնք կապված են սեփականության տիրապետման, օգտագործման և տնօրինման, ձեռնարկատիրական գործունեության, ֆիզիկական, իրավաբանական ու այլ սուբյեկտների միջև քաղաքացիաիրավական իրավունքից ծագող անձնական գույքային և ոչ գույքային հարաբերություններ հետ: Այսինքն, քաղաքացիական իրավունքի կարգավորման դաշտը, կարելի է ասել, մարդու ողջ կյանքն է՝ սկսած անձնական շատ իրավունքներից ու վերջացրած սեփականության հետ կապված բազմազան հարցերով:

Դրա համար էլ քաղաքացիական վեճերն ամենա տարածված դատավարություններն են: Իհարկե, Ձեր խախտված իրավունքների վերականգնման այլ միջոցներ էլ կան ՝ կարող եք, օրինակ, դիմել տարբեր տեսական վերահսկիչ ատյաններ, դատախազություն, նաև ֆինանսական հաշտարարի (օմբուդսմենի) գրասենյակ՝ եթե Ձեր բողոքը կապված է ֆինանսական ծառայությունների հետ, գույքային պահանջները չեն գերազանցում 10 մլն դրամն ու դրա վերաբերյալ գոյություն չունի դատական վճիռ կամ այն չի քննարկվում դատարանում: Սակայն իրավական վեճերի լուծման գործնական ձևն է դատական կարգը: Միայն դատական որոշումներն ունեն նաև հարկադիր կատարման մեխանիզմը՝ դատական կատարածուների ծառայությունը (ԴԱՀԿ):

Ավելին՝ հարցեր կան, որոնք իրավասու են լուծել միայն դատարանները: Օրինակ, միայն դատարանը կարող է աշխատանքից ազատված աշխատողին վերականգնել աշխատանքի, ի օգուտ քաղաքացու կամ իրավաբանական անձի այլ անձերից բռնագանձել վնաս պատճառած գումարները, լուծել գույքային և այլ ոչ գույքային իրավունքի հետ կապված վեճերը և այլն:

# ՈՐՈՇԵՔ ԻՆՔՆԵՐԴ

Հաճախ քաղաքացիները կարծում են, որ եթե դատավարությունը քաղաքացիական է, այլ ոչ թե քրեական, ապա մի քանի նորմատիվային ակտ կամ հոդված կարդալով, կարելի է ինքնուրույն դատարանում ներկայացնել սեփական շահերը: Իհարկե, Ձեզ ոչ ոք չի ստիպում քաղաքացիական հայցով դատարան գալ անպայման ներկայացուցչի (փաստաբանի) հետ: Դուք իրավունք ունեք ինքնուրույն ներկայացնել Ձեր շահերը: Բայց այստեղ մտածելու բան կա ու դա կապված է հայցի այսպես կոչված՝ «գնի» հետ:

Ի՞նչ գին ունի Ձեր հայցը: Եթե այդ գինը շատ ավելի ցածր է, քան փաստաբանի ծառայությունների արժեքն, ապա արժե փորձել դատարանում ինքնուրույն ներկայացնել հայցապահանջները: Բայց եթե հայցի գինը զգալիորեն է գերազանցում փաստաբանի հոնորարն ու կապված է խիստ սկզբունքային խնդրի լուծման հետ, ապա տվյալ դեպքում ճիշտ կլիներ դիմել փաստաբանի օգնությանը: Փաստաբանի օգնությանը Դուք կարող եք դիմել գոնե այն դեպքում, երբ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը մերժի Ձեր հայցը: Բողոքարկման պարագայում՝ վերաքննիչ դատավարության ընթացքում Ձեզ խիստ անհրաժեշտ կլինի փաստաբանի օգնությունն ու մասնակցությունը: Սակայն որոշ դեպքերում կարող է արդեն անհնարին լինել վերականգնել խախտված իրավունքը, քանզի վերաքննիչ գործը քննվում է ընդհանուր իրավասության առաջին ատյանում ներկայացված ու ուսումնասիրված փաստերի ու պահանջի հիման վրա: Եթե այդ առաջին ատյանի դատարանում Դուք լավ չեք պաշտպանել Ձեր պահանջն, ապա վերաքննիչ դատարանում փաստաբանն, անկախ իր կարողություններից ու հմտությունից, կարող է հնարավորություն չունենա օգնելու ու ամեն ինչ անհաջողության կմատնվի: Ուստի այստեղ նույնպես արժե մտածել՝ գործի հաջողության համար ի սկզբանե փաստաբանի օգնությանը դիմելու մասին:

Ինչու՞ է անհրաժեշտ այդ օգնությունը: Քաղաքացիական վեճերը հաճախ ավելի բարդ են, քան քրեականները, որովհետև տվյալ դեպքում իրավունքի ոլորտը շատ ավելի լայն է: Ի տարբերություն քրեական ոլորտի, իրավունքի աղբյուր այստեղ կարող են հանդիսանալ հիմնական օրենսգրքերն ու օրենքները, ՀՀ կառավարության որոշումները, տարբեր գերատեսչությունների հրամանները և այլն: Իսկ քրեական ոլորտում ՀՀ կառավարության որոշումներն ու այլ իրավա-

կան ակտերը գործածվում են շատ քիչ: Եթե քրեական գործի բարդությունը հանցագործության որակավորման և ապացուցման հետ է կապված ու դրա համար օգտագործվում է միայն քրեական օրենսդրությունն ու քրեական դատավարությունը, ապա քաղաքացիական գործերում անհրաժեշտ է կողմնորոշվել մեծ ծավալի նորմատիվ ակտերի մեջ, պատվիրատուի շահերի պաշտպանման համար հայթայթել այս կամ այն փաստաթղթի օգտագործման հնարավորությունները: Քաղաքացիական վեճերի այս առանձնահատկությունները հնարավորություն են տալիս փաստաբանին բոլոր ապացույցներից հավաքել տրամաբանական մի շղթա, ինչն ի վիճակի է անել միայն մասնագետը:

Մինչ ինքնուրույն դատարան գնալը (հայցվորի կամ պատասխանողի դերում) գոնե նախապես խորհրդակցեք փաստաբանի հետ՝ դա այդքան էլ թանկ չէ: Նրա օգնությամբ ավելի լավ կընկալեք խնդրի կարևորությունն ու կպարզեք Ձեր հնարավոր ու օրինաչափ իրավական դիրքորոշումը:

Բայց եթե դա էլ չանեք ու որոշեք լիովին ինքնուրույն պաշտպանել դատարանում Ձեր շահերը, ապա Ձեզ անհրաժեշտ է առաջին քայլերի ու քաղաքացիական դատավարությանը վերաբերող հարցերի առնվազը տարրական գիտելիքների իմացությունը:

Այս գրքույկում ներկայացված է այն ամենն, ինչ կօգնի Ձեզ ինքնուրույն, առանց փաստաբանի, ներկայացնել դատարանում Ձեր շահերը:

## ՎԵՃԵՐԻ ՆԱԽԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Բայց մինչ դատարան դիմելն, այնուամենայնիվ փորձեք հակառակ կողմի հետ հաշտեցմամբ գտնել խնդրի լուծումը:

Ավելի լավ է դա անել գրավոր, որպեսզի հետո դատարանում կարողանաք ներկայացնել Ձեր բարի կամքի ապացույցը:

***Առաջինը՝*** կարևոր չէ, թե ինչպես է վերնագրված կամ ինչպես է ձևակերպված Ձեր՝ հակառակ կողմին ուղղված հաշտության առաջարկը: Գլխավորն այն է, որ դա գրավոր տեսք ունենա ու փոխանցվի մյուս կողմին առձեռն կամ փոստով, որպեսզի ձեռնարկված միջոցների՝ հաշտության համաձայնության ուղարկման ու ստացման փաստերը հաստատվեն:

***Երկրորդը՝*** Ձեր առաջարկից պետք է երևա՝ ում է այն ուղղված և որոնք են Ձեր պահանջները:

***Եrrnrդը՝*** եթե պահանջը նյութական է (գույքային), ապա նշեք դրա հիմքերն ու կատարեք համապատասխան հաշվարկները:

***Չnrrnrդը՝*** եթե առաջարկը փոստով եք ուղարկում, ապա դա արեք պարտադիր ծանուցում ստանալու եղանակով (հակառակ կողմից Ձեր նամակը ստանալու փաստը հաստատող հավաստագրով): Եթե անձամ□ եք ներկայացնում հաշտեցման առաջարկն, ապա պարտադիր է ստացողի ստորագրությունը, ստանալու պահը՝ առ այն, որ նա ստացել է առաջարկը:

***Վեrջապես***, եթե Ձեզ ոչ մի կերպ չի հաջողվում հաշտեցմամ□ լուծել հարցը, դիմեք դատարան: Չի □ացառվում, որ Ձեր հակառակորդը հաշտությանն ուղղված Ձեր գործողությունները լուրջ չի ընկալել և եր□ դիմեք դատարան՝ վերջինս ինքը նման □անակցություններ վարի Ձեզ հետ: Ուստի այս պարագայում դատավարության ընթացքում նույնպես հնարավոր է կնքել հաշտություն, որը կարող եք ներկայացնել դատարանին՝ վճռով հաստատելու համար: Սա ավելի ապահով ու օպտիմալ տար□երակ է, քանզի հաշտության համաձայնությունը, որը հաստատվում է դատարանի վճռով, ունի նույն դատական վճռի ուժը և նույնպես կարող է կատարվել հարկադիր կարգով՝ ԴԱՀԿ-ի միջոցով:

# ԱՌԱՆՑ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ

Ի՞նչ է ղեsf իմանալ դաsաrանում ինfնուrույն ծահեrը ներկայացնելու համար:

***Քայլ 1-ին:*** Նախ պետք է ուսումնասիրել դատարանի աշխատանքի կանոններն ու տեղյակ լինել կազմակերպչական հարցերին, որի համար պետք է ծանոթանալ քաղաքացիական դատավարությանն ու դատական օրենսգրքերին: Ծանոթության կարգով չէր խանգարի մի անգամ դատարան գնալ և ուսումնասիրել այնտեղ պատերին փակցված տեղեկատվական նյութերին: Հետո, կախված իրավիճակից, անցնում եք հաջորդ քայլերի:

***Քայլ 2-րդ:*** Նախկան դատարան հայց ներկայացնելը, պետք է հստակ պատկերացում ունենաք, թե ինչ արդյունքի եք ուզում հասնել՝ գումարային, որևէ գործողությունների տեսքո՞վ, իրավունքի ճանաչմա՞ն, թե՝ այլ: Գրագետ կազմված հայցը զգալիորեն ավելացնում է Ձեր հաջողության շանսերը: Սա-

կայն հաջողությունն ավելի շատ կախված է Ձեր կողմից ներկայացված փաստերից՝ ապացույցներից, քանի որ յուրաքանչյուր պահանջ, անկախ դրա ներկայացման ձևից, պետք է հիմնվի փաստերի՝ ապացույցների վրա:

***Քայլ 3-րդ:*** Դատավարության ընթացքում եղեք ակտիվ՝ գործի բնույթին վերաբերող հարցեր տվեք հակառակ կողմին, ներկայացրեք բոլոր անհրաժեշտ ապացույցները և այլն: Նույնիսկ եթե լիովին իրավացի եք, Ձեզ անհրաժեշտ է ջանալ դա ապացուցելու համար: Շատ դեպքերում դատարանը, ճիշտ է, ներքին համոզմամբ հավատում է, որ իրականում ճշմարտությունը Ձեր ներկայացածն է, սակայն ապացույցների սակավության պատճառով չի կարող դուրս գալ օրենքի պահանջներից ու Ձեր պահանջը պետք է մերժի:

***Քայլ 4-րդ:*** Եթե Դուք հայց եք ներկայացնում ինչ-ինչ վնասների հատուցման կամ առհասարակ՝ գումարի գանձման վերաբերյալ, ապա միշտ պետք է հիշեք հայցի ապահովման մասին՝ դրա հետ կապված միջնորդությունը կարող եք ներկայացնել դատավարության յուրաքանչյուր փուլում: Հակառակ դեպքում կարող է ստացվել այնպես, որ դատարանի վճռի ուժի մեջ մտնելուց հետո պատասխանող կողմը անվճարունակ հայտնվի: Այսինքն՝ գործի քննության ընթացքում օտարի իր գույքը՝ պարտավորությունից խուսափելու նպատակով, և արդյունքում՝ Դուք նրանից ոչ մի հատուցում չստանաք: Սակայն պետք է նաև իմանալ, որ դատարանը, ընդունելով հայցի բավարարման ապահովումը, կարող է իր հերթին հայցվորից (Ձեզնից) պահանջել պատասխանող կողմի հնարավոր վնասների ապահովումը: Հայցի մերժվելու դեպքում պատասխանող կողմը դատարանի վճռի ուժի մեջ մտնելուց հետո կարող է հայցվորից (Ձեզնից) պահանջել այն գումարների (վնասների) հատուցումը, որոնք ծախսվել են հայցվորի (Ձեր իսկ) պահանջով՝ հայցի ապահովման համար:

***Քայլ 5-րդ:*** Եթե Ձեզ հասկանալի չէ ուժի մեջ մտած դատարանի վճռի կատարումն, ապա կարող եք պարզաբանման համար գրավոր դիմում ներկայացնել: Դատարանը դիմումը քննում է ողջամիտ ժամկետում՝ առանց նիստ հրավիրելու կայացնում է որոշում: Այս դեպքում օրենսգրքով սահմանված են որոշ նախապայմաններ: Մասնավորապես՝ անհրաժեշտ է դա-

տարանին ապացուցել, որ դատարանի վճիռը, որի վերա□երյալ Դուք պահանջում եք պարզա□անում, չի կատարվել, իսկ պարզա□անման արդյունքում՝ դրա էությունն ու □ովանդակությունը չի փոփոխվի: Միայն այս դեպքում դատարանը կպարզա□անի վճիռը ու կ□ավարարի Ձեր դիմումը *(ՀՀ քաղ. դատավարության օրենսգրքի 143 հոդված)*:

***<u>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈՐՀՈՒՐԴ:</u>*** Նախկան դատարան դիմելն արժե ուսումնասիրել նմանատիպ գործերի դատավարության փորձը: Թեմատիկ □աժանմամ□ դատարանի որոշումները կարող եք գտնել ՀՀ դատական համակարգի կայքում *(www.court.am),* դատարանում քննվող ողջ գործերի վերա□երյալ տեղեկատվությունը զետեղված է գործերի որոնման կայքում *(www.datalex.am):*

# I. ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ ԴԱՏԱՐԱՆ

*(ՀԱՅՑԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ, ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼԸ)*

## 1. Արդյո՞ք դատարան դիմելու (հայց հարուցելու) համար կան որոշակի ժամանակային սահմանափակումներ (հայցային վաղեմություն)

Դատարան դիմելու համար օրենքը նախատեսում է որոշակի ժամկետներ: Դա կոչվում է հայցային վաղեմության ժամկետներ *(Քաղ.օր, հ. 331)*:

Հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը 3 տարի է:

Սակայն պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ *(Քաղ.օր., 332-333 հ.)*:

Իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ:

Դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Նման դեպքում դա հիմք է դառնում, որպեսզի դատարանը վճիռ կայացնի հայցի մերժման մասին *(Քաղ.օր., 335)*:

Բացի դրանից Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91 հոդվածում հայցադիմումը ընդունելու մերժելու հիմքերի շարքում չի նշվում, որ դատարանը կարող է մերժել հայցադիմումի ընդունումը՝ պատճառաբանելով հայցային վաղեմության ժամկետի լրանալը: Ուստի, բոլոր դեպքերում, անկախ նրանից, թե լրացել են հայցային վաղեմության ժամկետները, թե՝ ոչ, դատարանը քննության է առնում հայցվորի ներկայացրած հայցադիմումը և հայցային վաղեմություն կարող է կիրառել միայն դատավարության մյուս կողմի՝ պատասխանողի միջնորդությամբ, եթե նման պահանջ ներկայացվել է մինչև վճիռ կայացնելը:

## 2. Դատարանն իրավունք ունի՞ վերականգնել հայցային վաղեմության ժամկետները, թե՝ ոչ

Բացառիկ դեպքերում, երբ դատարանը հայցվորի անձի հետ կապված հանգամանքների (ծանր հիվանդության, անօգնական վիճակի, անգրագիտության և այլն) հարգելի է ճանաչում հայցային վաղեմության բացթողումը, ապա խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության: Հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները կարող են ճանաչվել հարգելի, եթե դրանք տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին 6 ամսում, իսկ վաղեմության կրճատ ժամկետի դեպքում, եթե այդ ժամկետը հավասար է 6 ամսվա կամ պակաս է 6 ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում *(Քաղ.օր., հ.342)*:

## 3. Ինչպե՞ս են հաշվարկվում հայցային վաղեմության ժամկետները

Հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Սակայն այս կանոնից օրենսդրությամբ կարող են սահմանվել բացառություններ:

Այն պարտավորությունների համար, որոնց կատարման համար սահմանված է որոշակի ժամկետ, հայցային վաղեմության ընթացքը սկսվում է այդ ժամկետի ավարտմամբ: Օրինակ, մեկամյա կամ երկու տարի սահմանված պարտավորությունների դեպքում վաղեմության ժամկետը կսկսվի համապատասխանաբար մեկ կամ երկու տարին լրանալուց հետո:

Եթե ժամկետը որոշված չէ կամ որոշված է ցպահանջ, հայցային վաղեմության ընթացքը սկսվում է այն պահից, երբ պարտատիրոջ մոտ առաջանում է պարտավորության կատարում պահանջելու իրավունք, իսկ եթե պարտապանին արտոնյալ ժամկետ է տրամադրվել պահանջը կատարելու համար, հայցային վաղեմության հաշվարկը սկսվում է այդ ժամկետի ավարտից հետո:

Հետադարձ պարտավորությունների համար հայցային վաղեմության ընթացքը սկսվում է հիմնական պարտավորությունը կատարելու պահից *(Քաղ.օր., հ.337)*:

## 4. Հնարավո՞ր է հայցային վաղեմության ժամկետների ընդհատում, կասեցում, թե՝ ոչ

Հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե
- *ա) հայցի ներկայացմանը արգելք է հանդիսացել արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանք/անհաղթահարելի ուժ*
- *բ) հայցվորը կամ պատասխանողը գտնվում է ռազմական դրության փոխադրված զինված ուժերի կազմում*
- *գ) օրենքի հիման վրա ՀՀ կառավարության կողմից սահմանվել է պարտավորությունների կատարման հետաձգում/մորատորիում*
- *դ) անգործունակ անձն օրինական ներկայացուցիչ չունի*
- *ե) կասեցվել է համապատասխան հարաբերությունը կարգավորող օրենքի կամ այլ իրավական ակտի գործողությունը*

Բացի վերը նշածից, քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման հայցերով հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է նաև կենսաթոշակ կամ նպաստ նշանակելու մասին համապատասխան մարմնին քաղաքացու դիմելու կապակցությամբ՝ մինչև կենսաթոշակ կամ նպաստ նշանակելը կամ դրա նշանակումը մերժելը:

Նշենք, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է միայն այն դեպքում, երբ վերը նշած հանգամանքները ծագել են կամ շարունակել են գոյություն ունենալ վաղեմության ժամկետի վերջին ամսում, իսկ եթե վաղեմության ժամկետը հավասար է 6 ամսվա կամ պակաս է 6 ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում:

Վաղեմության ժամկետի կասեցման համար հիմք ծառայած հանգամանքը դադարելու օրվանից շարունակվում է ժամկետի ընթացքը: Ժամկետի մնացած մասը երկարաձգվում է մինչև 6 ամիս, իսկ եթե հայցային վաղեմության ժամկետը հավասար է 6 ամսվա կամ պակաս է 6 ամսից, ապա ժամկետը երկարաձգվում է վաղեմության ժամկետի չափով *(Քաղ.օր., հ.339)*:

Հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայց հարուցելով, ինչպես նաև պարտավոր անձի (պարտք ունեցողի) կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողությունները կատարելով:

Ընդհատումից հետո հայցային վաղեմության ժամկետի ընթացքը նորից է սկսվում: Մինչև ընդհատումն անցած ժամանակը չի հաշվվում նոր ժամկետի մեջ *(Քաղ.օր., հ.340)*:

Ավելացնենք նաև, որ գործարքների վերաբերյալ գործում են հայցային վաղեմության առանձին ժամկետներ, մասնավորապես՝ վիճահարույց գործարքի անվավերության պահանջ կարող է ներկայացվել մեկ տարվա ընթացքում, երբ հայցվորն իմացել էր գործարքն անվավեր ճանաչելու հանգամանքների մասին: Իսկ առոչինչ գործարքի հետևանքներ կիրառելու հայցով անձը կարող է դիմել դատարան դրա կատարման պահից սկսած 10 տարվա ընթացքում *(Քաղ. օր. հ. 317)*

## 5. Ինչպե՞ս է կարգավորվում հայցային վաղեմության ժամկետների ընթացքը դատարանի կողմից հայցն առանց քննության թողնելու դեպքում

Եթե դատարանն առանց քննության է թողել քաղաքացիական հայցն, ապա մինչև հայցի հարուցումն սկսված հայցային վաղեմության ժամկետի ընթացքը շարունակվում է ընդհանուր կարգով (Քաղ.օր., հ.341):

## 6. Լինու՞մ են դեպքեր, որոնց վրա հայցային վաղեմության ժամկետներ չեն տարածվում

Այո, հետևյալ դեպքերում՝

*ա) անձնական ոչ գույքային իրավունքների և այլ ոչ նյութական բարիքների պաշտպանությանն ուղղված պահանջների վրա, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.*

*բ) ավանդները վերադարձնելու վերաբերյալ ավանդատուների կողմից բանկին ներկայացվող պահանջների վրա*

*գ) քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառած վնասը հատուցելու պահանջների վրա: Սակայն նման վնասի հատուցման իրավունքի ծագման պահից 3 տարի անցնելուց հետո ներկայացված պահանջներն անցյալ ժամանակի համար բավարարվում են ոչ ավելի, քան հայցի ներկայացմանը նախորդած 3 տարիների համար.*

*դ) սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ամեն մի խախտման վերացման պահանջների վրա, թեկուզև այդ*

*խախտումները կապված չեն եղել տիրապետումից զրկելու հետ.*

*ե) սեփականատիրոջ՝ պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձանց ակտը, որով խախտվել է սեփականատիրոջ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքները, անվավեր ճանաչելու պահանջների վրա.*

*զ) օրենքով սահմանված այլ պահանջների վրա (Քաղ.օր., հ.344):*

## 7. Ինչպե՞ս կազմել քաղաքացիական գործով հայցադիմումը և կա՞ն արդյոք օրենսդրությամբ սահմանված պարտադիր պայմաններ հայցադիմումի համար, թե՝ այն կարելի է շարադրել ազատ ոճով

Նախևառաջ՝ հայցադիմումը դատարան է ներկայացվում գրավոր: Օրենսդրությամբ պարտադիր է նաև, որպեսզի հայցադիմումում նշվի հետևյալը.

*1) դատարանի անվանումը*

*2) գործին մասնակցող անձանց անունները/անվանումները/, նրանց հասցեները*

*3) հայցագինը, եթե հայցը ենթակա է գնահատման*

*4) հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները*

*5) հայցապահանջների հիմքերը հաստատող ապացույցները*

*6) բռնագանձման ենթակա կամ վիճարկվող գումարի հաշվարկը*

*7) հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ հայց հարուցելիս՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները*

*8) հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:*

Հայցադիմումում կարող են նշվել նաև այլ տեղեկություններ, եթե դրանք անհրաժեշտ են վեճի ճիշտ լուծման համար, ինչպես նաև հայցվորի միջնորդությունները *(Քաղ.դատ.օր., հ.87)*:

Հայցադիմումը պայմանականորեն (օրենքով սահմանված պարտադիր պայման չկա) պետք է բաղկացած լինի 4 մասից (ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ), որոն-

ցում հաջորդաբար պետք է շարադրվեն վերը նշված տեղեկությունները:

***Ներածական մաս***: Այստեղ պետք է նշված լինեն դատարանի անվանումը, գործին մասնակցող անձանց՝ հայցվորի, պատասխանողի, երրորդ անձանց, այդ թվում՝ ներկայացուցիչների անունները (անվանումները), նրանց փոստային հասցեները և հայցագինը, եթե հայցը գույքային բնույթ ունի և ենթակա է գնահատման (ասենք՝ 100 000 դրամի արժեքով գույքի պահանջի մասին, 200 000 դրամի չափով վնասի հատուցման պահանջի մասին և այլն): Ներածական մասում կարելի է ցույց տալ նաև հայցի առարկան՝ համառոտ, օրինակ՝ ամուսնալուծության պահանջի մասին, ալիմենտ բռնագանձելու պահանջի մասին, պայմանագիր կնքելուն պարտադրելու պահանջի մասին և այլն:

Ներածական մասում իրավաբանական անձանց անվանումները պետք է տրված լինեն նրանց հիմնադիր փաստաթղթերում հիշատակված անվանումներին ճիշտ համապատասխան: Ներկայացուցչի (ներկայացուցիչների) մասնակցության դեպքում նշվում է նաև նրանց աշխատանքի վայրը: Հայցադիմումում նշված հայցագնի չափով պետք է վճարվի “Պետական տուրքի մասին” ՀՀ օրենքով սահմանված համապատասխան չափով պետական տուրքի գումար: Որոշ պահանջների մասով հայցվորներն ու դիմողներն ազատված են պետական տուրքի վճարումից: Եթե ազատված չեն, սակայն հնարավորություն չունեն նախապես վճարելու պետական տուրքը, ապա պետք է ներկայացնեն հիմնավոր միջնորդություն՝ պետական տուրքի ժամկետի հետաձգման մասին: Հակառակ դեպքում (եթե նախապես պետական տուրք չի վճարվում, չի ներկայացվել վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն, կամ նման միջնորդությունը մերժվել է դատարանի կողմից), հայցադիմումն այս հիմքով ենթակա է վերադարձման:

Ներածական մասը, որպես կանոն, ընդունված է գրել թերթի վերին աջ մասում՝ սյունակի տեսքով:

***Նկարագրական մաս***: Ազատ ոճով, առանց ավելորդ էմոցիաների ներկայացրեք հայցադիմումի բուն էությունը: Խորհուրդ ենք տալիս պարզապես շարադրել փաստերը՝ պահպանելով դրանց հերթականությունը: Սկզբում նշեք այն պատճառը, որը սկիզբ է դրել Ձեր ու պատասխանող կողմի փոխհարաբերությանը (ասենք, իր հետ ամուսնացել եք, նրանից ապրանք եք գնել, նրան փող եք պարտքով տվել և այլն): Հետո նշեք, թե պատասխանող կողմի երբ և որ գոր-

ծողությունները հանգեցրել են Ձեր իրավունքների խախտմանը, ի՞նչ հանգամանքներում է դա կատարվել: Ներկայացրեք այն ամեն ապացույցները, որոնք հաստատում են Ձեր իրավացի լինելը (փաստաթղթեր, մուրհակներ, կտրոններ և այլն), նշեք վկաներին, որոնք կարող են հաստատել Ձեր բառերը, հնարավորության դեպքում ներկայացրեք այդ վկաների գրավոր հայտարարությունները (հետագայում դրանք կարող եք հաստատել վկաների կողմից դատարանում տրված ցուցմունքներով, երբ վերջինս դատարանի կողմից նախազգուշացվում է կեղծ ցուցմունք տալու դեպքում քրեական պատասխանատվության մասին): Հիմնավորեք հայցագինը համապատասխան հաշվարկներով: Նկարագրական մասը Ձեր պահանջների մասին յուրատեսակ մի պատմություն է, որովհետև այստեղ թվարկվում են հայցը հիմնավորող փաստերը և ցույց են տրվում այն կոնկրետ ապացույցները, որոնք տեղեկություններ են պարունակում Ձեր կողմից մատնանշված իրավաբանական փաստերի մասին: Նկարագրական մասի բովանդակությունը հնարավորություն է տալիս դատել Ձեր պահանջների օրինականության և հիմնավորվածության մասին: Ուստի դատարանին ներկայացված տեղեկությունների ամբողջականությունն ու ճշտությունը կարող են որոշակի չափով կանխորոշել նաև գործի ելքը և վարույթի տևողությունը: Մյուս կողմից, դատավորն այդ տեղեկությունների հաշվառմամբ է որոշում ներկայացված ապացույցների՝ տվյալ գործին վերաբերելիությունն ու թույլատրելիությունը:

***Պատճառաբանական մաս***: Այս մասում հստակ և ամբողջությամբ շարադրեք Ձեր (պատասխանող կողմին ուղղված) պահանջները և խնդրանք դատարանին դրանց բավարարելու վերաբերյալ: Ելնելով նկարագրական մասում նշված հիմքերից և ապացույցներից, տվեք բռնագանձման ենթակա կամ վիճարկվող գումարի հաշվարկը (Քաղ.դատ.օր., 87-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետ): Հնարավորության դեպքում նշեք նաև այն օրենքը կամ այլ նորմատիվ ակտերը, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը, և որոնց հիման վրա, ըստ Ձեզ, դատարանը պետք է լուծի գործը: Թեպետ դա պարտադիր չէ:

***Եզրափակիչ մաս***: Այստեղ նշեք Ձեր նյութաիրավական պահանջները: Եթե պատասխանողները մի քանիսն են, նշեք յուրաքանչյուրին ուղղված պահանջները: Ըստ որում, այդ պահանջներն ուղղված են ոչ միայն պատասխանողին (պատասխանողներին), այլ նաև դատարանին, որովհետև դատարանն է ընտրում և կիրառում

սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության եղանակը (իրավունքի ճանաչումը, բռնագանձումը, իրավահարաբերության դադարեցումը կամ փոփոխումը և այլն):

Եզրափակիչ մասում կարող են պարունակվել նաև Ձեր միջնորդությունները, օրինակ, պետական տուրքի վճարումը տարաժամկետելու, դատական ծախսերից ազատելու, գործը Ձեր բացակայությամբ քննելու, այլ անձանցից ապացույցներ պահանջելու, գործով փորձաքննություն նշանակելու, հայցի ապահովում կիրառելու մասին և այլն:

Հայցադիմումի եզրափակիչ մասում նշեք նաև կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Կցեք փաստաթղթեր, որոնք հավաստում են՝

*ա) պետական տուրքի վճարման անդորրագիրը (հետաձգման վերաբերյալ միջնորդության բացակայության դեպքում)*

*բ) հանգամանքները, որոնց վրա հիմնվում են Ձեր պահանջները:*

Ներքևի մասում կարող եք նշել ամսաթիվը (կարևոր չէ, քանի որ դատարան ներկայացրած հայցադիմումի վրա դրվում է մուտքի շտամպը, որտեղ նշվում է ամսաթիվը) ու դրեք Ձեր ստորագրությունը:

# ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԴԱՏԱՐԱՆ

Հայցադիմումը պատրաստ է դատարան ներկայացնելու համար: Դատարանի գրասենյակում պարտավոր են այն ընդունել և գրանցել: Հաջորդ 3 օրվա ընթացքում (այն պահից սկսած, երբ հայցադիմումի քննությունն իրականացնելու համար դատարանի նախագահի կողմից մակագրվում է կոնկրետ դատավորին) դատարանը պարտավոր է Ձեր հայցադիմումի քննության ընդունելու վերաբերյալ որոշում կայացնել (եթե չկան վերադարձման ու ընդունման մերժման հիմքեր) և հայտնել Ձեզ նախնական դատական լսումների ժամկետը:

## 8. Ո՞ր դեպքերում և ով կարող է ազատվել պետական տուրքի վճարումից

*-եթե հայցը կապված է աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի հետ*

*-եթե հայցը կապված է ալիմենտի գանձման հետ*

*-եթե հայցը վերաբերում է հայցվորի խեղման կամ առողջության այլ վնասման, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառած վնասի փոխհատուցմանը*

*-եթե հայցը հարուցվում է սոցիալական ապահովագրության և սոցապահովության մարմինների կողմից՝ տուժողին կամ նրա ընտանիքի անդամներին վճարված և նպաստի գումարները վնաս պատճառողից գանձելու վերաբերյալ ռեգրեսիվ հետադարձ հայցերի դեպքում*

*-հայցվորները՝ հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով*

-հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ դատարան տրվող հայցերով

-ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝

ա) գործը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը բեկանելու, վճիռների կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, վճիռների կատարման եղանակը և կարգը փոփոխելու, հայցերի ապահովման կամ ապահովման մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու վերաբերյալ դիմումներով

բ) նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատարանի վճիռը կամ որոշումը վերանայելու վերաբերյալ բողոքներով

գ) դատարանների վճիռներով նշանակված տուգանքների զիջման կամ նվազեցման վերաբերյալ դիմումներով

դ) դատարանների վճիռների կատարումը շրջադարձելու դիմումներով, բաց թողնված ժամկետները վերականգնելու, ինչպես նաև դատական կատարածուների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով

ե) տուգանքների զիջումը կամ նվազեցումը մերժելու մասին դատարանների որոշումների դեմ բողոքներով, դատարանների մյուս որոշումների դեմ բողոքներով

զ) վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով

է) մշակութային արժեքներն ապօրինի տիրապետողից հետ պահանջելու մասին հայց ներկայացնելու դեպքում

- դատախազության մարմինները՝ պետական շահերի պաշտպանության վերաբերյալ հայցերով
- ՀՀ կենտրոնական բանկը
- վճռաբեկ բողոք տվող անձի կողմից դատավարության ընթացքում հանդես եկած դատավարության մասնակիցները և երրորդ անձինք՝ բողոքին միանալու վերաբերյալ դիմումներով
- դիմողները՝ ընտրելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով
- դիմողները՝ քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումներով

- *փախստականի կարգավիճակ հայցողները՝ փախստականի կարգավիճակ ստանալու մասին դիմումի մերժումը բողոքարկելու վերաբերյալ հայցերով և բողոքներով*
- *փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ իրենց խախտված բնակարանային իրավունքները վերականգնելու վերաբերյալ հայցերով և բողոքներով*
- *հոգեբուժական հաստատությունները՝ քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումներով*
- *դատական ակտերի հարկադիր կատարողները՝ կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի վերանայման վերաբերյալ դիմումներով (“Պետական տուրքի մասին” ՀՀ օրենքի 22-րդ հոդված)*
- *դիմողները՝ վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումներով*

Վերը նշված անձինք (դեպքերում) պետական տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

## 9. Ինչպե՞ս են կողմերի միջև բաշխվում դատական ծախսերը

Եթե Ձեր հայցն ամբողջությամբ մերժվել է, ապա դատական ծախսերը կրում եք Դուք, իսկ եթե բավարարվել է՝ պատասխանողը: Սակայն եթե Դուք հայցը ներկայացնելու ժամանակ վճարել եք պետական տուրքը, ապա այն դատարանի կողմից Ձեր օգտին պատասխանողից գանձելու համար պետք է առկա լինի հայցվորի (Ձեր) կողմից ներկայացված պահանջը: Հակառակ դեպքում՝ դատարանն այն Ձեր օգտին չի բռնագանձի, քանի որ հայցը քննվում է միայն ներկայացված պահանջների շրջանակում: Եթե պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգվել է (նախապես պետական տուրքը չի վճարվել), ապա չվճարված պետական տուրքի հարցը դատարանը լուծում է անկախ կողմի պահանջից, քանի որ դա դատարանի պարտավորությունն է ու պետք է լուծվի վճռով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73 հոդվածի պահանջներին համապատասխան:

Նույն մեխանիզմն է գործում նաև վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու դեպքերում *(Քաղ.դատ.օր, հ.73):*

### 10. Իրավունք ունի՞ հայցվորը մեկ հայցադիմումի մեջ շարադրել մի քանի պահանջ և արդյո՞ք դրանք պետք է քննվեն միաժամանակ, թե առանձին

Հայցվորն իրավունք ունի մեկ հայցադիմումում միացնելու միմյանց հետ կապված մի քանի պահանջ:

Դատարանն իրավունք ունի մեկ վարույթում միացնելու մի քանի միատեսակ գործ, որոնց մասնակցում են միևնույն անձինք:

Դատարանն իրավունք ունի առանձին վարույթներում առանձնացնելու մեկ կամ մի քանի միացված պահանջ:

Այս երկու դեպքում էլ դատարանը կայացնում է որոշում *(Քաղ.դատ.օր. հ.89):*

### 11. Դատավորը միանձնյա՞ է լուծում հայցադիմումն ընդունելու հարցը

Այո՝ դատավորը միանձնյա է լուծում հայցադիմումն ընդունելու հարցը: Նա պարտավոր է վարույթ ընդունել օրենքի պահանջների պահպանմամբ հայցադիմումը: Հայցադիմումն ընդունելու մասին դատավորը կայացնում է որոշում, որտեղ նշվում են գործի քննության ժամանակը և վայրը *(Քաղ.դատ.օր.հ.90):*

### 12. Իրավունք ունի՞ դատավորը մերժելու հայցվորի ներկայացրած հայցադիմումի ընդունումը և որ դեպքերում

Դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝

- *վեճը ենթակա չէ դատարանում քննության*
- *նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը*
- *այլ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում առկա է նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ*
- *նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է միջնորդ դատարանի վճիռ, բացառությամբ դատարանի կողմից միջնորդ դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու մերժելը, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով միջնորդ*

*դատարանի վճիռը նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վերանայելու դեպքերը:*

## 13. Ի՞նչ է տեղի ունենում հայցադիմումը ներկայացնելուց հետո

Հայցադիմումի ընդունումը մերժելու դեպքում դատարանը համապատասխան որոշում է կայացնում հայցադիմումը ստանալու օրվանից 3-օրյա ժամկետում: Եթե այդ 3-օրյա ժամկետում նման որոշում չի կայացվում, ապա դա նշանակում է, որ հայցադիմումն ընդունված է:

Որոշումը, հայցադիմումը և դրանց կից փաստաթղթերը պատշաճ ձևով ուղարկվում են հայցվորին:

Հայցադիմումի ընդունման վերաբերյալ մերժման որոշումը կարող է բողոքարկվել Վերաքննիչ դատարան՝ հայցվորի կողմից այն ստանալուց հետո եռօրյա ժամկետում:

Վերաքննիչ դատարանի կողմից բողոքի բավարարման արդյունքում որոշումը վերացվելու դեպքում հայցադիմումը համարվում է դատարանում ընդունված սկզբնական ներկայացման օրը *(Քաղ.դատ.օր.,հ.91):*

## 14. Ո՞ր դեպքերում հայցադիմումը կարող է վերադարձվել հայցվորին

Դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե՝

- *չեն պահպանվել Քաղ.դատ.օր.,հ.87-ում սահմանված հայցադիմումի ձևն ու բովանդակությունը*
- *հայցադիմումը ստորագրված չէ կամ ստորագրել է նման լիազորություն չունեցող անձը կամ այնպիսի անձ, որի պաշտոնեական դրությունը ներկայացված չէ*
- *գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին*
- *այլ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ*
- *չեն ներկայացվել սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր: Իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կամ դրա չափը նվա-*

*զեցնելու` բացակայում են դրանց վերաբերյալ միջնորդու-թյունը կամ նման միջնորդությունը մերժվել է*

*- մեկ հայցադիմումում միացված են մեկ կամ մի քանի պատաս-խանողներին ուղղված, միմյանց հետ կապ չունեցող պա-հանջներ*

*- մինչև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կա-յացնելը հայցվորը դիմել է այն վերադարձնելու համար:*

Հայցադիմումը վերադարձնելու մասին դատարանը որոշում է կա-յացնում այն ստանալու օրվանից 3-օրյա ժամկետում:

Հայցադիմումը վերադարձնելու դեպքում Դուք (հայցվորը) կարող եք վերացնել թույլ տրված խախտումները ու կրկին դիմել դատարան:

Որոշմանը համաձայն չլինելու դեպքում հայցադիմումը վերա-դարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող է բողոքարկվել Վերաքննիչ դատարան հայցվորի կողմից այն ստանա-լուց հետո` եռօրյա ժամկետում:

Վերաքննիչ դատարանի կողմից բողոքի բավարարման դեպքում հայցադիմումը համարվում է դատարանում ընդունված սկզբնա-կան ներկայացման օրը *(Քաղ.դատ.օր.,հ.92):*

## 15. Մինչև դատաքննությունն սկսելը պատասխանո-ղը կարո՞ղ է ծանոթանալ հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին

Այո` դատարանը պատասխանողին ուղարկում է հայցադիմումի և դրանց փաստաթղթերի պատճենները:

Այն դեպքում, երբ հայցադիմումին կից փաստաթղթերը ծավալուն են կամ դժվար է պատճենահանել, դատարանը գործին մասնակցող այլ անձանց ծանուցում է, որ նշված փաստաթղթերը` դրանց ծա-նոթանալու նպատակով, դեպոնացված են դատարանում: Ծանուց-ման մեջ նշվում են դրանց ծանոթանալու ժամկետները:

Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենները ստանալ` օրենքով սահմանված չափով պետական տուրք վճարելուց հետո *(Քաղ.դատ.օր.,հ.93):*

## 16. Ի՞նչ է կատարվում, երբ հայտնի չէ պատասխանողի գտնվելու վայրը՝ հայցադիմումը և դրան կից փաստաթղթերի պատճեններ ուղարկելու համար

Եթե պատասխանողի փաստացի գտնվելու վայրն անհայտ է, ապա դատարանը գործը քննում է՝ վերջին բնակության վայրի (կամ նրա վերջին հայտնի աշխատավայրի) ղեկավարի ծանուցում ստանալու փաստը հավաստող մակագրությամբ հաղորդագրություն ստանալուց հետո:

Դուք, որպես հայցվոր, կարող եք դատարան միջնորդություն անել և դատարանը՝ հարկադիր ծառայության միջոցով հայտարարում է պատասխանողի և (կամ) նրա գույքի հետախուզում: Դրա վերաբերյալ դատարանը համապատասխան որոշում է կայացնում, որը կատարվում է անհապաղ՝ "Դատական ակտերի հարկադիր կատարման մասին" ՀՀ օրենքով սահմանված կարգով: *(Քաղ.դատ.օր, հ. 94):*

## 17. Ստանալով հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի պատճենները՝ պատասխանողը կարո՞ղ է դրանց վերաբերյալ ներկայացնել առարկություններ

Պատասխանողը, մինչև գործի քննությունը, իրավունք ունի դատարան և գործին մասնակցող այլ անձանց պատասխան ուղարկել հայցադիմումի վերաբերյալ՝ դրան կցելով հայցի դեմ իր առարկությունները հաստատող փաստաթղթերը:

Պատասխանում նշվում են՝

- *դատարանի անվանումը*
- *հայցվորի անունը/անվանումը*
- *հայցվորի պահանջները լրիվ կամ մասնակիորեն մերժելու շարժառիթները, ինչպես նաև այդ պահանջների վերաբերյալ առարկությունները հիմնավորող ապացույցները*

Պատասխանում կարող են նշվել նաև այլ տեղեկություններ, նաև պատասխանողի միջնորդությունները:

Պատասխանը ստորագրում է պատասխանողը կամ նրա ներկայացուցիչը: Այս վերջին դեպքում պատասխանին կցվում է նրա (ներկայացուցչի) լիազորությունները հաստատող լիազորագիրը *(Քաղ.դատ.օր., հ.95):*

## 18. Իրավունք ունի՞ քաղաքացին հակադարձ (հակընդդեմ) պահանջ ներկայացնել դատավարության ժամանակ և որ դեպքերում

Մինչև գործով վճիռ կայացնելը, պատասխանողն իրավունք ունի հակընդդեմ հայց հարուցել ընդդեմ հայցվորի՝ սզբնական հայցի հետ քննելու համար:

Հակընդդեմ հայցը հարուցվում է հայց հարուցելու ընդհանուր կանոններով:

Հակընդդեմ հայցն ընդունվում է, եթե՝

*ա) հակընդդեմ պահանջն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը*

*բ) հակընդդեմ հայցի բավարարումը լրիվ կամ մասամբ բացառում է սկզբնական հայցի բավարարումը*

*գ) հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև առկա է փոխադարձ կապ, և դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել վեճի առավել արագ և ճիշտ լուծումը (Քաղ.դատ.օր.,հ.96):*

## 19. Ինչպե՞ս վարվել, որպեսզի մինչև գործի քննությունն ավարտելը պահպանվի վիճելի գույքը կամ պատասխանողի ունեցվածքը

Դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ, կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը: Հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում:

Միջնորդությունը քննարկվում է այն ստացվելու օրը և կայացվում է որոշում *(Քաղ.դատ.օր.,հ.97):*

## 20. Հայցի ապահովման ինչպիսի՞ միջոցներ կարող են կիրառվել

*ա) պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելը*

*բ) պատասխանողին որոշակի գործողություններ կատարելու արգելելը*

*գ) այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը*

*դ) գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց հարուցելու դեպքում գույքի իրացումը կասեցնելը:*

*ե) պատասխանողի մոտ հայցվորի գույքի վրա արգելանք դնելը՝ անհապաղ կամ 5 օրը չգերազանցող ժամկետում*

Անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է կիրառել հայցի ապահովման մի քանի միջոց:

Դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ հայցի ապահովման դեպքում պատասխանողն իրավունք ունի հարկադիր կատարման ծառայության դեպոզիտ հաշիվ մուծել հայցվորի պահանջած գումարը *(Քաղ.դատ.օր.,հ.98*):

Եթե հայցը մերժվում է, ապա հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Իսկ բավարարման դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը *(Քաղ.դատ.օր.,հ.101)*:

Բացի դրանից դատարանը, ձեռնարկելով հայցի ապահովման միջոցներ, կարող է պատասխանողի միջնորդությամբ հայցվորից պահանջել դրանց տրամադրելու ապահովումը՝ պատասխանողի հնարավոր վնասների հատուցման համար: Պատասխանողն էլ իրավունք ունի հայց հարուցելու նույն դատարան՝ ընդդեմ հայցվորի հայցի ապահովմամբ իրեն պատճառած վնասների հատուցելու պահանջով *(Քաղ.դատ.օր.,հ.102):*

## 21. Ո՞ր դեպքերում է դատարանը հայցը կամ դիմումը թողնում առանց քննության

Դատարանը հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե՝

- *այլ դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում առկա է նույն անձանց միջև և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ*
- *առկա է գործին մասնակցող անձանց համաձայնությունը՝ տվյալ վեճը միջնորդ դատարանի քննությանը հանձնելու մասին, և միջնորդ դատարան դիմելու հնարավորությունը չի վերացել*
- *իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի կամ հաստատման կամ ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթով հավաստված իրավունքները վերականգնելու մասին*

*դիմումը քննելիս վեճ է ծագել իրավունքի մասին (Քաղ.դատ.օր. հ.103):*

## 22. Քաղաքացու համար ինչպիսի՞ հետևանքներ կարող է ունենալ հայցը կամ դիմումն առանց քննության թողնելը

Հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին դատարանը կայացնում է որոշում:

Այդ որոշման մեջ կարող են լուծվել գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերը բաշխելու և պետական տուրքը վերադարձնելու մասին հարցերը:

Գործին մասնակցող անձինք հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող են բողոքարկել Վերաքննիչ դատարան հայցվորի կողմից այն ստանալուց հետո` եռօրյա ժամկետում:

Հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշումը վերացվելու դեպքում գործի վարույթը համարվում է վերսկսված:

Հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու համար հիմք ծառայած հանգամանքները վերանալուց հետո հայցվորը կամ դիմողն իրավունք ունի կրկին դիմել դատարան *(Քաղ.դատ.օր.,հ.104):*

## 23. Քաղաքացիական գործերի քննության ժամանակ ովքե՞ր կարող են լինել ներկայացուցիչներ

Քաղաքացիները կարող են դատարանում իրենց գործերը վարել անձամբ կամ իրենց ներկայցուցիչների միջոցով: Քաղաքացու մասնակցությունը գործին չի զրկում նրան` գործով ներկայացուցիչ ունենալու իրավունքից:

Դատական ներկայացուցիչ կարող են լինել` փաստաբանները, արհմիությունների, ստեղծագործական միությունների և այլ հասարակական կազմակերպությունների լիազորները: Անչափահասների, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացու ներկայացուցիչները դատարանում նրանց ծնողներն են, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, անհայտ բացակայող ճանաչված քաղաքացու ներկայացուցիչները` նրանց գույքի հավատարմագրային կառավարիչը, իսկ այն գործով, որին պետք է մասնակցեր մահացած ճանաչված քաղաքացու ժառանգը, եթե ժառանգությունը դեռևս ոչ ոք չի ընդունել, որպես ժառանգի ներ-

կայացուցիչ հանդես է գալիս ժառանգական գույքի պահպանման և կառավարման համար նշանակված անձը *(Քաղ.դատ.օր.,հ.43):*

Քաղաքացու ներկայացուցչի անձնական մասնակցությունը գործին չի զրկում նրանց գործով այլ ներկայացուցիչ ունենալու իրավունքից *(Քաղ.դատ.օր., 39-րդ հոդվածի 1-ին կետ, 43-րդ հոդվածի 2-րդ կետ):*

Դատարանում ներկայացուցիչ չեն կարող լինել անչափահաս կամ խնամակալության, կամ հոգաբարձության տակ գտնվող անձինք, դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք, դատավորները, դատախազները, քննիչները, ինչպես նաև դիտավորյալ հանցագործության համար դատապարտված և դատվածությունը չմարած անձինք, պետական ծառայության մեջ գտնվող փաստաբանները, եթե, իհարկե, նրանք հանդես չեն գալիս որպես համապատասխան դատարանի, դատախազության, փաստաբանական միության լիազորներ կամ որպես օրինական ներկայացուցիչներ *("Դատավորի կարգավիճակի մասին" ՀՀ օրենքի 9, "Դատախազության մասին" ՀՀ օրենքի 6, "Փաստաբանական գործունեության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածներ)*:

## 24. Կարո՞ղ է կողմը դիմել դատարանին արագացված դատաքննություն կիրառելու համար

Արագացված դատաքննությունն՝ ի տարբերություն սովորականի, ընթանում է շատ արագ և կոնկրետ ու մակերեսային:

Դատարանն իրավունք ունի կիրառելու արագացված դատաքննություն, եթե՝

- *գործի էությունից բխում է դրա անհապաղ քննության անհրաժեշտությունը*
- *հայցն ակնհայտ հիմնավոր է*
- *հայցն ակնհայտ անհիմն է*

Արագացված դատաքննության կիրառելու հիմքերն են, մասնավորապես, այն դեպքերը, երբ՝

- *պահանջը հիմնավորված է գրավոր գործարքի վրա*
- *պահանջը հիմնված է անվիճելի իրավունքի վրա՝ նախապես գնահատված վնասով*
- *ներկայացվել է հայրությունը որոշելու հետ չկապված ալիմենտներ բռնագանձելու վերաբերյալ պահանջ*
- *ներկայացվել է աշխատանքային վեճի հետ կապված պահանջ*

*- չեն ներկայացվել պահանջը հաստատող ապացույցներ: (Քաղ.դատ.օր.,հ.125):*

Դատարանն իրավունք ունի արագացված դատաքննություն կիրառելու իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ: Արագացված դատաքննություն կիրառելու մասին դատարանը կայացնում է որոշում *(Քաղ.դատ.օր.,հ.126):*

## 25. Իրավունք ունե՞ն կողմերը հաշտության համաձայնություն կնքել վճռի կատարման ընթացքում

Կողմերն իրավունք ունեն հաշտության համաձայնություն կնքել դատարանի վճռի հարկադիր կատարման ընթացքում:

Կողմերի հաշտության համաձայնությունը կարող է վերաբերել նաև դատարանի վճռի հարկադիր կատարման եղանակին, ժամկետներին և կարգին:

Հաշտության համաձայնությունը կնքում են գրավոր՝ իրենց կողմից ստորագրված մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

Հաշտության համաձայնությունը կողմերը ներկայացնում են հարկադիր կատարողին *(Քաղ.դատ.օր.հ.202)*, որն էլ այն ներկայացնում է դատարանին՝ վճիռը վերանայելու համար:



# II. ՈՒ՞Ր ԴԻՄԵԼ, ԵԹԵ ԲԱՎԱՐԱՐՎԱԾ ՉԵՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՅԱՑՐԱԾ ՎՃՌԻՑ

*(ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ)*

## 26. Ո՞վ կարող է դիմել քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան և ինչ ժամկետներում

Առաջին ատյանի դատարանի վճռի դեմ բողոքի իրավունք ունեն գործին մասնակցող անձինք, ինչպես նաև գործին մասնակից չդարձած այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վճիռ է կայացվել:

Վերաքննիչ բողոքը բերվում է առաջին ատյանի վճիռը հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Վերաքննիչ բողոքը պատշաճ ձևով ուղարկվում է վերաքննիչ դատարան, իսկ բողոքի պատճենը՝ վճիռ կայացրած առաջին ատյանի դատարան: Իսկ առաջին ատյանի դատարանը բողոքի պատճենը ստանալու օրվանից ոչ ուշ, քան հաջորդ օրը, պարտավոր է գործն ուղարկել վերաքննիչ դատարան:

## 27. Ի՞նչ պետք է նշվի վերաքննիչ բողոքի մեջ

*1) դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.*

*2) բողոքը բերող անձի և գործին մասնակցող անձանց անունները (անվանումները).*

*3) դատարանի անվանումը, որի կայացրած վճռի դեմ բերվում է բողոքը, գործի համարը և վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը.*

*4) նշում նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտման մասին, որը ազդել է գործի ելքի վրա.*

*5) վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը.*

*6) բողոք բերող անձի պահանջը.*

*7) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:*

Եթե առաջին ատյանի դատարանում բողոք բերած անձը զրկված է եղել բողոքարկվող հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից, ապա վերաքննիչ բողոքում պետք է նշի նաև իր դիրքորոշումը բողոքարկվող հարցի վերաբերյալ:

Վերաքննիչ բողոքը ստորագրում է բողոք բերող անձը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի լիազորությունները հավաստվում են սահմանված կարգով:

Բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դատական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը:

Վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում: Վերաքննիչ բողոքի հիմքերը չեն կարող փոփոխվել, լրացվել բողոքի քննության ընթացքում *(Քաղ.դատ.օր.,հ.210):*

## 28. Դուք գոհ եք վճռից, բայց մյուս կողմը վերաքննիչ բողոք է բերել՝ ի՞նչ պետք է անել

Վերաքննիչ բողոք բերող անձը պարտավոր է գործին մասնակցող այլ անձանց պատշաճ ձևով ուղարկել բողոքի և դրան կից փաստաթղթերի պատճենները:

Գործին մասնակցող անձը, ստանալով վերաքննիչ բողոքի պատճենը, մինչև գործի քննության իրավունք ունի իր պատասխանն ուղարկելու Վերաքննիչ դատարան և գործին մասնակցող այլ անձանց: Պատասխանը ստորագրում է գործին մասնակցող անձը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի ստորագրած պատասխանի կցվում է գործը վարելու նրա լիազորությունները հավաստող լիազո-

ռագիրը: Պատասխանին կարող են կցվել փաստաթղթեր, որոնք նախկինում չեն ներկայացվել:

Այս դեպքում պատասխանին կցվում են գործին մասնակցող այլ անձանց այդ փաստաթղթերի պատճեններն ուղարկելու ապացույցները:

## 29. Կարո՞ղ է արդյոք վերաքննիչ բողոքը վերադարձվել, և ինչ հետևանքներ դա կունենա

Վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերը հետևյալն են՝

*1) չեն պահպանվել Քաղ.դատ.օր.,հ.210 պահանջները.*

*2) վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը.*

*3) մինչև Վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոք բերած անձից բողոք է ստացվել այն հետ վերցնելու մասին:*

*4) բողոքը ներկայացրել է այն անձը, ով տվյալ դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի.*

*5) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման.*

*6) գործին մասնակցող անձանց միջև առկա է վերաքննության իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնություն, և նման համաձայնություն կնքած մյուս կողմը չի համաձայնվել գործը Վերաքննիչ դատարանում քննելու վերաբերյալ:*

Վերաքննիչ դատարանը սահմանված կարգով *(Քաղ.դատ.օր.,հ.144, կ.2)* գործը ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում կայացնում է որոշում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին: Որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված բոլոր առերևույթ խախտումները: Նման որոշման դեպքում բողոք բերող անձին պատշաճ ձևով ուղարկվում է միայն Վերաքննիչ դատարանի որոշումը:

Վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

Վերաքննիչ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ որոշումը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում:

Որոշումը Վճռաբեկ դատարանի կողմից վերացվելու դեպքում բողոքը համարվում է Վերաքննիչ դատարանում ընդունված՝ սկզբնական ներկայացնելու օրը *(Քաղ.դատ.օր.,հ.213):*

## 30. Ի՞նչ ժամկետներում և ինչ կարգով է գործը քննվում Վերաքննիչ դատարանում

- *գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը*
- *դատարանի՝ սնանկության գործը կամ սնանկության հարցն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում*
- *այն բացառիկ դեպքերում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտերը հրապարակման պահից դատավորի կողմից հայտարարվել են օրինական ուժի մեջ մտած, այդ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում*
- *միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն օրենքով նախատեսված դեպքերում*
- *գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վերաքննիչ բողոք բերելու այն օրվանից սկսած՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի*
- *նախատեսված ժամկետներից հետո բերված վերաքննիչ բողոքը դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվել է դատարանի կողմից*
- *առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը*

*կարող է ընդունվել ճննության այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական ճննության ընթացքում թույլ են տր-վել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատա-կան ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, կամ առկա են նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ (Քաղ.դատ.օր.,հ.207):*



# III. Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԲԱՎԱՐԱՐՎԱԾ ՉԵՔ ՆԱԵՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻՑ

## 31. Ովքե՞ր և որ դեպքերում կարող են քաղաքացիական գործերով դիմել Վճռաբեկ դատարան

Ստորադաս դատարանի` օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտը Վճռաբեկ դատարանում բողոքարկելու իրավունք ունեն`

*1) գործին մասնակցող անձինք*

*2) գլխավոր դատախազը և նրա տեղակալները` օրենքով նախատեսված դեպքերում*

Վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը և վերաքննիչ դատարան բողոքարկված միջանկյալ դատական ակտերի կապակցությամբ Վերաքննիչ դատարանի ընդունած որոշումները բողոքարկելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք:

Վճռաբեկ բողոք բերելու համար հիմք են`

*1) դատական սխալը` նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա*

*2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքները:*

Առաջին ատյանի դատարանի և Վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած վճիռների դեմ բերված վճռաբեկ բողոքներով գործերը քննվում են Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից:

## 32. Քաղաքացիական գործերով վճռաբեկ բողոք բերելու համար ժամկետային սահմանափակումներ գոյություն ունե՞ն

*1) Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև դատական ակտի օրինա-*

*կամ ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով կամ սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի:*

2) *Միջանկյալ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել միայն օրենքով նախատեսված դեպքերում: Միջանկյալ դատական ակտը կարող է բողոքարկվել այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում, եթե օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:*

3) *Գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վճռաբեկ բողոք բերելու սկսած այն օրվանից՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին:*

## 33. Ո՞ր դեպքերում են խախտված կամ սխալ կիրառված համարվում նյութական և դատավարական իրավունքի նորմերը

Նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝

- *չի կիրառել այն օրենքը, որը պետք է կիրառեր*
- *սխալ է մեկնաբանել օրենքը*

Դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե դա հանգեցրել է գործի սխալ լուծման:

Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

1) *դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով*
2) *դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին*
3) *վճիռը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն*
4) *վճիռը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ*
5) *գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը (Քաղ.դատ.օր., հ.228):*

## 34. Ո՞ր հանգամանքներն են քաղաքացիական գործերով համարվում նոր երևան եկած հանգամանքներ

Նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

*1) բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն*

*2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի ակնհայտ կեղծ ցուցմունքները, փորձագետի ակնհայտ կեղծ եզրակացությունը, թարգմանչի ակնհայտ սխալ թարգմանությունը, փաստաթղթերի կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը հանգեցրել են ապօրինի կամ չհիմնավորված դատական ակտ կայացնելուն*

*3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել է, որ գործին մասնակցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները կամ դատավորը, գործի քննության հետ կապված, կատարել են հանցավոր արարք*

*4) վերացվել է այն դատական ակտը, դատավճիռը, վարչական կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշումը, որը հիմք է ծառայել սույն վճռի կայացման համար (Քաղ.դատ.օր., հ.204.32):*

Նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմքերը

- *Նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝*

*1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտած որոշմամբ ամբողջությամբ կամ մի մասով հակասահմանադրական է ճանաչվել այն օրենքը կամ իրավական ակտը, որը կիրառել է դատարանը*

*2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը (Քաղ.դատ.օր., հ.204.33):*

## 35. Ինչպե՞ս բերել վճռաբեկ բողոք

Վճռաբեկ բողոք բերելու հիմքերի առկայության դեպքում այդ բողոքը բերելու իրավունք ունեցող անձինք պատճառ ձևով բողոքը ուղարկում են Վճռաբեկ դատարան: Վերաքննիչ դատարանը բողոքի պատճենը ստանալուց ոչ ուշ, քան հաջորդ օրը, պարտավոր է գործն ուղարկել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ բողոքում պետք է նշվեն՝

*1) դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը.*

*2) բողոք բերող անձի անունը (անվանումը).*

*3) վճիռ կայացրած դատարանի անվանումը, գործի համարը, վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, գործին մասնակցող անձանց անունները (անվանումները), վեճի առարկան.*

*4) բողոք բերած անձի պահանջը՝ օրենքների, այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, և նշում այն մասին, թե նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմերն են խախտվել կամ սխալ կիրառվել, և դրանց հիմնավորումները, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը.*

*5) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:*

Վճռաբեկ բողոքը ստորագրում է բողոք ներկայացնող անձը կամ նրա ներկայացուցիչը, գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը: Եթե վճռաբեկ բողոքը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա բողոքին կցվում է ներկայացուցչի՝ սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը

Բողոքին կցվում են սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթը և բողոքի պատճենը՝ գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները *(Քաղ.դատ.օր., հ.233)*:

Վճռաբեկ բողոք բերած անձն իրավունք ունի բողոքը հետ վերցնել մինչև Վճռաբեկ դատարանի կողմից գործի քննություն սկսելը:

Վճռաբեկ դատարանը գործը պետք է քննի և որոշում կայացնի ողջամիտ ժամկետում:

Վճռաբեկ դատարանի որոշումը վերջնական է և վերանայման ենթակա չէ:

Վճռաբեկ դատարանի որոշումը պատճառ ձևով ուղարկվում է բողոք բերած անձին և գործին մասնակից անձանց՝ այն կայացնելու օրվանից ողջամիտ ժամկետում: